ՀԵՆՐԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 06.IX.1989

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Ավարտելով միջնակարգ դպրոցը Հ. Խաչատրյանը **2006 թ.** ընդունվել է Ա. Բակունցի անվան պետական մանկավարժական քոլեջի «Իրավագիտություն» բաժին, որն ավարտել է **2008 թ.**՝ ստանալով գերազանցության դիպլոմ։
2008 թ. ընդունվել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) «Պատմության և իրավագիտության ֆակուլտետ»-ի «Իրավագիտություն» բաժին, որն ավարտել է **2012 թ.**։
2013 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Պատմություն» բաժին, որն ավարտել է **2015 թ.**՝ ստանալով մագիստրոսի աստիճան։
2015 թ. ձևակերպվել է որպես ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ։
01.VI.2021 թ. պաշտպանել է «Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարական համակարգը 387-630-ական թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսություն։
Հ. Խաչատրյանը **2013 թ.** աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հին դարերի պատմություն», ապա «Միջին դարերի պատմություն» բաժիններում, որպես ավագ լաբորանտ, այնուհետև **2018 թ.** նշանակվել է կրտսեր գիտաշխատողի, իսկ **2022 թ.** գիտաշխատողի պաշտոններում։
Հ. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են քարտեզագրության, միջնադարյան Հայաստանի իրավունքի, Հայաստանի ու Իրանի պատմական աշխարհագրության վերաբերյալ հիմնախնդիրները։ Հեղինակ է 18 գիտական հոդվածների։